Բոստոնի ընկերներին կը թողնեմ պատմել, թէ ինչ է արել մեր հանգուցեալ ընկերը Ամերիկայի կազմակերպութեան համար: Եթէ չեմ սխալւում, 1899–ին էր, որ Վռամեանը մեկնեց Բոստոն, նոր եկած լինելով Թիֆլիզից, ուր գնացել էր Ընդհանուր Ժողովին մասնակցելու: Շատերը կը յիշեն այն բուռն ու անվերջ միջկուսակցային պայքարները, որ ծագել էին մեր ամերիկեան գաղութի մէջ: Վռամեան գրեթէ մեն–մենակ կը տանէր իր ուսերի վրայ այդ պայքարը, որի մէջ նետուել էր, կարելի է ասել, a corps perdu, որովհետեւ նա երբեմն նոյնիսկ վտանգի էր մատնում իր կեանքը:

Հնարաւոր է, որ այդ մոլեգին ըմբշամարտի մէջ, երբ թուով ուժեղ հակառակորդը չէր խնայում ոչ մի միջոց «Դաշնակցութիւնը» վարկաբեկելու եւ հրապարակից ջնջելու համար, հնարաւոր է, որ Վռամեանի կիրքն եւս երբեմն սայթաքած ու վրիպած լինի, ինչպէս իւրաքանչիւր մահկանացուինը:

Կիրքը մեծ էր մեր ընկերոջ մէջ, կիրք, որ ծնունդ էր նրա յեղափոխական խառնուածքի ու համոզումի: Առանց այդ կրքի, հանրային գործիչը անընդունակ է մեծ գործերի, առանց նրան՝ Վռամեանը չէր կարող լինել այն ինչ որ էր:

Բուռն ու կրքոտ էր մեր ընկերոջ բանակռիւը նաեւ Պոլսի «Ազատամարտ»ի մէջ, ուր հարկ էր ստէպ պատասխանել, պոլսական յատուկ մամուլի գաղտասուքներին ու յարձակումներին: Թէչեանների ու Քասիմների դէմ էր յաճախ այդ կռիւը,— մարդկանց, որոնք տականքն են ժամանակակից հայութեան եւ որոնց շրջանից ... անգամ այսօր առատութեամբ դուրս են սողում մատնիչներն ու դաւաճանները...

* * *

Սակայն, հրապարակագրութիւնը չէր կլանում Վռամեանի գլխաւոր ուժերը, նա մընում էր աւելի շատ երկրորդական մի պարապմունք: Թէ Ժընեւում, թէ Ամերիկայում ու Կ. Պոլսում, Ժէօն–Թիւրքերի յեղափոխութիւնից յետոյ՝ մեր ընկերը մնում էր իր էական ու կարեւորագոյն պաշտօնի մէջ,— այն է՝ վարել Կենտրոնական մարմնի քարտուղարութիւնը, թղթակցական ընդարձակ յարաբերութիւնները:

Տեսել եմ նրան այդ պաշտօնին մէջ Կ. Պոլսում եւ չեմ թաքցրել իմ հիացմունքը: Ընկերները բազմաթիւ էին ու բազմազբաղ, բայց ոչ մէկը Վռամեանի չափ: Ժողովներից դուրս, ուր հանդէս կը գար հիւթեղ զեկուցումներով ու ճառերով, դուք նրան կը տեսնէիք միշտ բիւրօական սեղանի առջեւ, թղթեր քրքրելիս, նամակներ գրելիս: Շտապ քայլերով կ՚երթար ճաշարան, շտապ կ՚ուտէր եւ նոյն աճապարար քայլուածքով կը վերադառնար իր աշխատանքի սենեակը, «Ազատամարտ»ի խմբագրատուն: Կը խուսափէր աւելորդ հանդիպումներից, այցելութիւններից ու զրոյցներից: Գործի մարդ էր գերազանցապէս եւ երբ ընկերներից մինը չափէն աւելի կը մնար սենեակում ու կը զբաղեցնէր իր ուշադրութիւնը, «Դաշնակցութեան Քարտուղարը» կը տաղտկանար եւ ոեւէ ձեւով կը հեռացնէր զրուցասէր ընկերոջ: Սիրում էին նրան եւ չէին վիրաւորւում: Ժամանակը թանկ էր, եւ ամէն մի վայրկեանը Վռամեան կը ծախսէր «գործի» վրայ:

Յոգնութիւն, դադար չգիտէր փոքրիկ, ջղուտ, կենսալի մարմինը: Կը գրէր անդուլ, ժամերով, օրերով. նամակներ ու հրահանգներ դէպի ամէն կողմ: Կ՚աշխատէր մինչեւ կորովի վերջին կաթիլը, ստէպ մինչեւ ուժասպառում: Մեզնից շատերը, մի երկու տարի երկրում ապրելուց կամ գրիչ ու խօսք մարզելուց յետոյ, արդէն «յոգնած են», արդէն «գործել են», արդէն «ծերացել են»: Վռամեանը թէկուզ 100 տարի ապրէր, անխոնջ կը գործէր ու ոչ մի պատահար, ոչ մի ազգային կամ անհատական ձախորդութիւն չէր կաշկանդում նրա կամքն ու եռանդը:

Այդ հսկայական աշխատասիրութիւնն եւս մէկն է հանգուցեալի տիրական գծերից, որով նա արժանի է քաղաքացիական իր բարձր կոչման եւ միանգամայն մեր ամենաբուռն երախտագիտութեան:

Երկար տարիներ Ժընեւ, մի քանի տարի Ամերիկա, մի քանի տարի Պոլիս — չեն սպա–